ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԼՈԼԻԿԻ ՀԱՐԱՎԱՄԵՐԻԿՅԱՆ ՑԵՑ ՎՆԱՍԱՏՈՒԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Ներկա իրավիճակը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում լոլիկի հարավամերիկյան ցեցն (այսուհետ՝ ցեց) առաջին անգամ հայտնաբերվել է 2012 թվականին Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարակերտ և Ղուկասավան համայնքներում:

2. Ցեցը սնվում է մորմազգի մշակաբույսերի տերևներով, պալարներով և պտուղներով, թիթեռների թռիչքը սկսվում է վաղ գարնանը և շարունակվում մինչև հոկտեմբերի վերջը:

3. Հողօգտագործողները չկարողանալով ճիշտ որոշել պայքարի միջոցառումների իրականացման ժամկետները ստիպված ավելացնում են քիմիական մշակումների քանակը, կատարում լրացուցիչ և անարդյունավետ ծախսեր, որոնց արդյունքում բարձրանում է արտադրանքի ինքնարժեքը, նվազում ստացվող եկամուտը:

4. Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) նախաձեռնությամբ 2013 թվականին տնտեսավարողների համար կազմակերպվել են ուսուցումներ, միջազգային փորձագետների մասնակցությամբ՝ խորհրդատվություններ, հրատարակվել՝ տեղեկատվական թերթիկներ: 2014-2015 թվականներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցներով ձեռք են բերվել ֆերոմոնային թակարդներ, որոնց միջոցով իրականացված դիտարկումների (մոնիթորինգ) հիման վրա տնտեսավարողներին տրամադրվել է խորհրդատվություն վնասատուի դեմ պայքարի իրականացման ժամկետների և առավել արդյունավետ պեստիցիդների տեսակների ու օգտագործման չափաքանակների վերաբերյալ:

5. Չնայած պետության կողմից իրականացված վերը նշված ծրագրերի դեռևս ցածր է հողօգտագործողների իրազեկվածությունը:

Ծրագրի նպատակը և խնդիրները

6. Ծրագրի նպատակն է.

1) լոլիկի մեծածավալ արտադրությամբ զբաղվող Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոսկետափ և Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքներում, 10 հեկտար տարածքի վրա, իրականացնել ցեցի դեմ պայքարի համալիր (ագրոտեխնիկական, մեխանիկական, կենսաբանական և քիմիական) միջոցառումների կիրառման նոր առաջարկների փորձարկման և դրանց արդյունավետության գնահատումը.

2) ցեցի դեմ պայքարի միջոցառումների կատարման ժամկետների որոշումը և այդ մասին հողօգտագործողներին օպերատիվ տեղեկատվության ապահովումը, առավել արդյունավետ պեստիցիդների տեսակների ու օգտագործման չափաքանակների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրումը.

3) ցեցի կենսակերպի, տարածվածության և վնասակարության վերաբերյալ հողօգտագործողների իրազեկվածության բարձրացումը:

7. Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

1) Ծրագրի իրականացման տեղի (այսուհետ՝ փորձադաշտ) և պայքարի միջոցառումների հերթագայության մեխանիզմի հստակեցումը.

2) Ծրագրի արդյունքների վերաբերյալ հողօգտագործողների լայն շրջանակների համար տեղեկատվության հասանելիության ապահովման և խորհրդատվության տրամադրման մեխանիզմների հստակեցումը,

3) Ծրագրի մոնիթորինգի իրականացման մեխանիզմի առաջադրումը,

4) Ծրագրի ռիսկերի գնահատումը:

Ծրագրի բյուջեն

8. Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրը պետական բյուջեն է:

9. Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է 11,182,800 դրամ, ներառյալ բոլոր հարկերը և տուրքերը:

10. Ծախսերն ըստ օգտագործման ուղղությունների՝

1) աշխատավարձ՝ 2 մասնագետ x 5 ամիս x 300.000դրամ = 3.000.000 դրամ.

2) տրանսպորտային ծախսեր՝ 369.000 դրամ (50 այց x 18 լ x 410 դր.).

3) պայքարի միջոցառումներ՝ 10 հեկտար, 7 սրսկում, յուրաքանչյուր հեկտարի մեկ սրսկման արժեքը շուրջ 70.000 դրամ (ներառյալ պեստիցիդների գինը) 70.000 դր. x 7 x 10 հեկտար = 4.900.000 դրամ.

4) այլ ծախսեր՝ 100.000 դրամ (դաշտը մեկուսացնող և վնասատուին վանող մշակաբույսերի սերմերի ձեռքբերում, խնամք և այլն).

5) տեղեկատվական գրքույկի մշակում՝ 500.000 դրամ.

6) 5000 տպաքանակով տեղեկատվական գունավոր գրքույկի տպագրական ծախսեր՝ 250.000 դրամ.

7) ուսուցողական-ցուցադրական սեմինարների կազմակերպում 2 անգամ՝ 200.000 դրամ.

8) ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)՝ 1,863,800 դրամ (9,319,000 x 20%):

Ծրագրի իրականացման հիմնական մոտեցումները

11. Ծրագիրը կիրականացվի Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոսկետափ և Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքներում «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի միջոցով (այսուհետ՝ Խորհրդատու):

12. Ցեցի երեք հատ ֆերոմոնային թակարդները և անհրաժեշտ օժանդակ նյութերը (Գ-աձև ցցեր, ֆերոմոնով գլխիկներ և սոսնձաթղթեր) Խորհրդատուին տրամադրում է նախարարությունը, «Բուսասանիտարիայի ծառայությունների մատուցում» ծրագրի շրջանակներում ձեռքբերվող ֆերոմոնային թակարդներից ու օժանդակ նյութերից:

13. Փորձադաշտում ցեցի թակարդներում ֆերոմոնով գլխիկները պետք է փոխել 4, իսկ սոսնձաթղթերը՝ 9 անգամ:

14. Ֆերոմոնային թակարդները կամրացվեն փայտից կամ պլաստիկ նյութից պատրաստված Գ-աձև, 65-70 սմ բարձրությամբ, սրածայր ցցերին:

15. Խոհրդատուն դիտարկումները կիրականացնի 3-օրյա պարբերականությամբ:

16. Խոհրդատուն ողջ վեգետացիայի ընթացքում փորձադաշտում իրականացնում է ցեցի դեմ պայքարի միջոցառումներ, փորձադաշտը տնօրինող հողօգտագործողին տալիս ցուցումներ ագրոտեխնիկական միջոցառումների կատարման վերաբերյալ:

17. Խորհրդատուն Ծրագրի ընթացքում կկազմակերպի 2 ուսուցողական-ցուցադրական սեմինարներ լոլիկի մշակությամբ զբաղվող հողօգտագործողների համար: Սեմինարների մասնակիցների ցանկը կներկայացվի նախարարության կողմից:

18. Ծրագրի շրջանակներում կմշակվի տեղեկատվական գրքույկ ցեցի տարածվածության, կենսակերպի, վնասակարության և պայքարի միջոցառումների վերաբերյալ:

19. Տեղեկատվական գրքույկը կհրատարակվի 5000 տպաքանակով, որից 4500 հատը կտրամադրվի մարզպետարաններին, համայնքների ղեկավարներին՝ լոլիկի մշակությամբ զբաղվող տնտեսավարողներին տրամադրելու համար, իսկ 500 հատը՝ գյուղատնտեսության ոլորտի մասնագետներին և գրադարաններին:

Ծրագրի մոնիթորինգը և հաշվետվողականությունը

20. Ծրագրի մոնիթորինգն իրականացնում է նախարարության համապատասխան ստորաբաժանումը:

21. Խորհրդատուն յուրաքանչյուր ամիս, մինչև հաջորդող ամսվա 10-ը, Ծրագրի շրջանակներում կատարված միջոցառումների և դրանց արդյունքների մասին կներկայացնի հաշվետվություն նախարարություն:

Ծրագրի իրականացման ռիսկերը

22. Ծրագրի իրականացման հնարավոր ռիսկեր են՝

1) փորձադաշտը տնօրինող հողօգտագործողի կողմից անբարեխիղճ վերաբերմունքը և Խորհրդատուի մասնագիտական ցուցումների չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը.

2) եղանակային անբարենպաստ պայմանների և բնական աղետների հետևանքով պայքարի միջոցառումների իրականացման դժվարությունները:

23. Ռիսկերի մեղմման հնարավորություններն են՝

1) Խորհրդատուի և փորձադաշտը տնօրինող հողօգտագործողի միջև պայմանագրային պարտավորությունների հստակ սահմանումը.

2) Ծրագրի արդիականության և կարևորության մասին իրազեկումը:

Ակնկալվող արդյունքը

24. Ծրագրի իրականացման և փորձադաշտը տնօրինող հողօգտագործողի կողմից ագրոտեխնիկական համալիր միջոցառումների կատարման արդյունքում ակնկալվում է ցեցի հասցված վնասից փորձադաշտում բերքի կորուստների կանխում առնվազն 70 %-ով:

25. Ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների արդյունավետության և գրանցված արդյունքների լայնածավալ լուսաբանման շնորհիվ տնտեսավարողների իրազեկվածության բարձրացում: